ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

2(12)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№2(12)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№2(12)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 2(12)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դրամագիտություն

Ալեքսանդր Հակոբյան

Արխիպելագից դեպի մայրցամաք. «Հայաստանի դրամագիտություն» հասկացության շրջանակը (*ռուս.*) 8

Ժակ Նուրպեկրլեան

Հին դրամների՝ պատմական և աշխարհագրական տեղեկությունները ստուգելու ունակությունը (*անգլ.*) 23

Հասմիկ Մարգարյան

Հայաստանի անձնավորումը Պարթևական հաղթակամարի վրա՝ ըստ Օգոստոս կայսեր մ. թ. ա. 19 – 16 թթ. հաղթադրամների (*ռուս.*) 27

Մաքսիմ Եվադեան

Հայոց թագուհի Էրատոյի մասին. պատմական և դրամագիտական ուսումնասիրություն (*անգլ.*) 38

Մաքսիմ Եվադեան, Հովանն Սիմոնեան

Մարիամ Կարսեցու չհրապարակված կնիքը և Բագրատունիների տան՝ Դավիթյան ծագման հավակնությունը (*անգլ.*) 47

Շահէն Յովսէփեան

Պարսկական դրամներ՝ թողարկված Երևանում (*հայ.*) 55

Ռոբեն Վարդանյան, Արմինե Զոհրաբյան, Համլետ Պետրոսյան

Դրամներ Արցախի Տիգրանակերտի պեղումներից (*հայ.*) 74

Ռոյ Առաքելյան

Ակնարկ Տիգրան II-ի դրամական թողարկումների ժամանակագրության մասին (*անգլ.*) 87

Մեյեդ Օմիդ Մոհամմադի, Սաիդ Սոլեյմանի

Հատվել է Իրանի Հյուսիսում. «Մուհր» մակադրոշմներ արծաթե դրամների վրա (*անգլ.*) 95

Վեռա Բոյան

Հայաստանից գտնված Հնդկաստանի Մեծ մողոլների դրամները և դրանց դերը միջազգային առևտրում (*հայ.*) 106

Վլադիմիր Գորոնչարովսկի, Անդրեյ Տերեշչենկո

Տավրիկյան Խերսոնեսի հարավային արվարձանում հայտնաբերված՝ բյուզանդական կայսր Արտավազդի հազվագյուտ սեմիսի մասին (*ռուս.*) 114

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանդր Հակոբյան, Լուսինե Ղուշչյան

Մետաղադրամը իրերի վրա. Ռուսաստանի ազգագրական թանգարանի հավաքածուից չորս հայկական զարդերի դրամագիտական վերլուծություն (*անգլ.*) 122

Աստղիկ Իսրայելյան

Դրամների մոգական և գեղագիտական արժեքները (*հայ.*) 132

Արտակ Ասատրյան

Պղնձարդյունաբերությունը և պղնձագործությունը Արևելյան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին – 20-րդ դարի սկզբին (Պատմաազգագրական համառոտ ուրվագիծ) (*հայ.*) 152

Լիլիա Ավանեսյան, Վեռա Բոյան

Գորգը և տեքստիլ ապրանքները Ռուսաստանի հետ հայ վաճառականների առևտրում 17-րդ դարի կեսին – 18-րդ դարի սկզբին (*ռուս.*) 166

Կարինե Բազեյան, Գրիգոր Աղանյան

Մետաղադրամը որպես զարդ Բարձր Հայքի և Շիրակի կանանց ավանդական հագուստի համալիրում (*հայ.*) 180

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Մանուչարյան

Դրամական անվանումների արտացոլումը հայկական վիմագրերում (*հայ.*) 190

Արմինե Ջոհրաբյան, Բորիս Գասպարյան, Անի Ադիգյոզալյան

Կշռաքար՝ հայտնաբերված Արտաշատ մայրաքաղաքի տարածքից (*հայ.*) 206

Ռոբերտո Դան, Անանարիտա Ս. Բոնֆանտի

Նախնական դիտարկումներ Հայաստանի պատմության թանգարանում պահվող Ուրարտական թագավորական թասերի նոր ուսումնասիրության մասին (*անգլ.*) 217

Հայկ Ավետիսյան, Արտակ Գնունի, Արսեն Բոբոխյան, Գագիկ Սարգսյան, Լևոն Մկրտչյան

Ճանապարհային ցանցի գործարկումը բրոնզ-երկաթեդարյան Սյունիքում՝ խոշոր բնակավայրային ագլոմերացիաների գոյության պայմաններում (*հայ.*) 225

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

Ժիրայր Քրիստրիանեան

Ռոբերտ Վ. Էդվարդսի հայկական և հարակից մինչհետմիջնադարյան ժամանակաշրջանի դրամների հավաքածուն՝ Կիլիկիայում գտածոների վայրերի փաստագրված տվյալներով (*անգլ.*) 242

Ռոբեն Վարդանյան, Արմինե Ջոհրաբյան, Հասմիկ Հովհաննիսյան

Ոչ թանգարանային դրամագիտական թվային շտեմարան թանգարանում (*հայ.*) 260

Զարուհի Բարսեղյան

«Պահպանելով անցյալը և ներկայացնելով ներկան՝ կառուցում ենք ապագան». ՀՀ կենտրոնական բանկի այցելուների կենտրոն (*հայ.*) 267

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 271

DOI:10.56653/18290361-2023.12-260

Ռուբեն Վարդանյան
Պատմական գիտությունների թեկնածու
Հայաստանի պատմության թանգարան
rubenvardanyan1@gmail.com

Արմինե Զոհրաբյան
Պատմական գիտությունների թեկնածու
Հայաստանի պատմության թանգարան
zohrabyanarmine@yahoo.com

Հասմիկ Հովհաննիսյան
Պատմական գիտությունների թեկնածու
Հայաստանի պատմության թանգարան
hassmik@yahoo.com

ՈՉ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ԹՎԱՅԻՆ ՇՏԵՄԱՐԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ*

Հիմնաբառեր. Հայաստանի պատմության թանգարան, մետաղադրամ, հավաքածու, դրամագիտական թվային շտեմարան, հնագիտական ենթատեքստ, իրազեկություն, պատասխանատվություն:

Ներածություն

Ժամանակ առ ժամանակ մեր համերկրացիները թանգարան են բերում դրամներ՝ մասնագիտական խորհրդատվության, ինչպես նաև Հայաստանի պատմության թանգարանին (ՀՊԹ) կամ Կենտրոնական բանկին (ԿԲ) վաճառելու ակնկալիքով, որի գնման հանձնաժողովի կազմում կան նաև ՀՊԹ դրամագիտության բաժնի աշխատակիցներ: Դրամները լինում են տարբեր ծագման: Մեզ են դիմում Հայաստանի զանազան վայրերում պատահաբար հին դրամ գտած քաղաքացիները՝ ցուցաբերելով առողջ հետաքրքրասիրություն և քաղաքացիական պատասխանատվություն: Լինում են բարեխիղճ հավաքորդներ, որոնք մեզ հետ կիսվում են իրենց ժողովածուների տվյալներով: Լինում է նաև, որ մեզ ներկայացվում են Հայաստանում կամ հարևան երկրներում ոչ օրինական ճանապարհով, վերջին տասնամյակներում անվերահսկելի տարածում ստացած միջոցով՝ մետաղորսիչով, հայտնաբերված դրամներ:

Ոչ թանգարանային դրամագիտական շտեմարանը

2002 թ. «Թանգարանային առարկաների տվյալների շտեմարան» ծրագրի շրջանակներում դրամագիտության բաժինը ստացավ համակարգիչ, տպիչ և սկա-

* Ստացվել է 08.08.2023 թ., ուղարկվել է գրախոսման 19.08.2023 թ., ընդունվել է տպագրության 01.11.2023 թ.:

ներ՝ «Հայաստան համահայկական հիմնադրամի» կողմից: Այդ տեխնիկական հնարավորությունների ձեռքբերումը մեզ հուշեց սկանավորել թանգարան ներկայացվող այն նյութերը, որոնք դրամագիտական կարևորություն ունեն, ինչպես նաև վերցնել դրանց չափագիտական տվյալները: Քանի որ ոչ բոլոր դրամներն էինք անհրաժեշտ համարում սկանավորել, բայց մասնագիտական խորհրդատվություն մատուցվում էր, 2005 թվականից սկսեցինք պահել նաև սպասարկման մատյան, որում հակիրճ գրանցում էինք դրամների ծագման կամ ձեռքբերման մասին այցելուների հաղորդված ճիշտ կամ հորինված տվյալները:

Զբաղված լինելով թանգարանային և գիտական գործունեությամբ՝ ժամանակ չենք ունեցել տարիների ընթացքում հավաքած ամբողջ նյութը հանգամանորեն ուսումնասիրելու համար: Մեր այս հաղորդումն ունի նախնական բնույթ, որի նպատակն է խոսել երևույթի մասին և կարճ հաշվետվություն տալ 2002 – 2022 թվականների ընթացքում դրամագիտության բաժնի աշխատակիցների կողմից այդ ուղղությամբ կատարած գործունեության մասին:

Տախտ. 1-ում տրված գծապատկերը ներկայացնում է ոչ թանգարանային դրամագիտական թվային շտեմարանի ձևավորման քանակական տվյալների դինամիկան 2002 – 2022 թվականների ընթացքում: 20 տարում ունեցել ենք շուրջ 1100 դիմորդ (գծապատկերում՝ նարնջագույն սյունակները), որոնք ներկայացրել են 7200-ից ավել դրամներ (դեղին սյունակները), որոնցից շուրջ 5400-ը սկանավորվել է (կանաչ սյունակները)՝ գերակշիռ մասի չափագիտական տվյալների արձանագրմամբ:

Աշխարհագրական ծագման առումով կարելի է ասել, որ մեզ ներկայացված դրամների մեծ մասը հայտնաբերվել է Հայաստանի Հանրապետության տարածքից, սակայն զգալի թիվ են կազմում նաև ներմուծված դրամները: Օրինակ, կիլիկյան հայկական դրամները, շուրջ 1100 հատ, անկասկած բերվել են դրսից:

Իսլամական դրամները կազմում են ամենամեծ խումբը՝ շուրջ 1600 դրամ, որոնց թվում կան նաև գանձեր: Ընդհանուր առմամբ, իսլամական դրամներն արտացոլում են Հայաստանի դրամաշրջանառության պատկերը 7 – 19-րդ դարերում: Ամենավաղ իսլամական դրամները Արաբական խալիֆայության 8 – 9-րդ դդ. թողարկումներ են, որոնց զգալի մասը պղնձից են և ամենայն հանականությամբ ծագում են միջնադարյան Դվինի տարածքից: Սելջուկյան դրամների մեջ ամենամեծ խումբը ելտկուզյան 12 – 13-րդ դդ. պղնձե կանոնավոր թողարկումներն են: Մեր կողմից հաշվառված դրամների մեջ իսլամական պատկերակիր թողարկումները՝ զենգյան, արդուքյան, բեկթիմուրյան և այլն, քիչ են: Մեծ խմբերից են մոնղոլ Հուլաղույանների արծաթե և պղնձե դրամները, որոնք հայտնաբերվում են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Մինչդեռ 14 – 16-րդ դդ. հետմոնղոլական թուրքական իշխանությունների (թիմուրյան, ակ-կոյունլու) դրամները բավական քիչ են: Նոր շրջանի իսլամական դրամների մեջ ամենամեծ խումբը իրանական (սեֆյան, աֆշարյան, զենդյան, դաջարյան) 16 – 19-րդ դդ. թողարկումներն են, որոնք քանակապես գերազանցում են համաժամանակյա օսմանյան դրամների գտածոները, քանի որ Հայաստանի Հանրապետության տարածքն այդ դարերում եղել է գերազանցապես Պարսկաստանի կազմում: Շտեմարանում կան դրամներ,

որոնք բնորոշ չեն Հայաստանի դրամաշրջանառությանը, ինչպես, օրինակ, սեֆյան «լարիները», մամլուքյան ֆելսերը կամ բուվեիյան դինարները:

Քննարկվող ժամանակահատվածում մեր համաքաղաքացիների կողմից թանգարան բերված բյուզանդական դրամներից արձանագրել ենք շուրջ 450-ը: Դրամների ավելի քան 70 տոկոսը պղնձից են, 15%-ը՝ արծաթից և 13%-ը՝ ոսկուց: Ամենավաղ թողարկումները V դարի ոսկե սոլիդներն են, որոնք հիմնականում հայտնաբերվում են Արարատյան դաշտավայրում: Այս վաղ սոլիդները ներթափանցել են Հայաստան հիմնականում տարանցիկ առևտրի միջոցով:

Արծաթե դրամները բյուզանդական դրամաշրջանառության մեջ ավելի փոքր դեր են կատարել, քան ոսկին և պղինձը: Քաղաքացիների կողմից ներկայացված արծաթե դրամներն ամբողջությամբ 7-րդ դարի հեքսագրամներ են՝ թողարկված Հերակլիոս և Կոնստանս 2-րդ կայսրերի օրոք: Այս արծաթե դրամների առատությունը Հայաստանում կապվում է քաղաքական և ռազմական իրադարձությունների հետ:

Պղնձե ֆոլիսները ներկայացված են գերազանցապես 11-րդ դարի թողարկումներով, որոնք 12 – 13-րդ դարերում՝ մակադրոշմված կամ առանց մակադրոշմի, շրջանառվել են նաև Սելջուկների օրոք՝ սելջուկյան և վրացական դրամների հետ միասին: Քիչ չեն նաև 11-րդ դարի բյուզանդական ոսկե դրամները՝ հայտնաբերված, հիմնականում, Արարատի, Լոռու և Տավուշի մարզերում:

Կարող ենք արձանագրել, որ մեր այս թվային շտեմարանում ունենք բյուզանդական դրամների գտածոներ ՀՀ գրեթե բոլոր մարզերից, ընդ որում ավելի շատ կենտրոնական և հյուսիսային, ավելի քիչ՝ հարավային շրջաններից:

Շտեմարանում առկա մյուս խմբերը, նվազման կարգով, հետևյալներն են՝ Մեծ Հայքի թագավորության դրամներ (ավելի քան 800), հունա-հելլենիստական (շուրջ 500), հռոմեական (շուրջ 400), սասանյան (շուրջ 300), պարթևական (շուրջ 300), վրացական (շուրջ 150), հրեական և նաբատեական (շուրջ 100): Այս խմբերում կան ինչպես անկասկած ՀՀ-ում հայտնաբերված, այնպես էլ որոշ հարևան երկրներից բերված դրամներ: Մի քանի հատից մինչև մի քանի տասնյակի հասնող խմբերով են ներկայացված Ծոփքի, Ատրոպատենեի, նոր և նորագույն ժամանակների եվրոպական և այլ դրամները: Այս խմբերից միայն հրեական և նաբատեական դրամների մասին կարող ենք վստահաբար ասել, որ հայտնաբերվել են ՀՀ-ում, ավելի ստույգ՝ Արտաշատ մայրաքաղաքի տարածքում, շրջակա գյուղերի որոշ բնակիչների և գանձախույզների կողմից: Մնացած խմբերում, թեև դրամների հիմնական մասը հայաստանյան գտածոներ են, կան նաև դրսից բերված դրամներ:[1]

Եղել են նաև մեր ժամանակներում կեղծած դրամներ բերողներ, որոնք ցանկացել են պարզել դրանց իսկությունը, իսկ ոմանք, գուցե, ստուգել մեր մասնագիտական կարողությունները: Դեպքեր շատ են եղել, բայց մեր կողմից սկանավոր-

1 Այս տարիների ընթացքում չենք զլացել սկանավորել նաև փոքր չափերի հնագիտական իրերը: Շտեմարանում այժմ ունենք այցելուների բերած հնագիտական 230 իրի լուսանկար:

վել են ոչ բոլորը: Այժմ ունենք աներկբայորեն կեղծ 47 դրամ, թեև ամբողջ նյութի մանրամասն ուսումնասիրության ընթացքում կարող են ի հայտ գալ նորերը, ինչպես դա տեղի ունեցավ հայկական հելլենիստական դրամների խումբն այս հաշվետվության առիթով կարգավորելիս: Տախտ. 2, 3, 4-ում պատկերված են դրամներ, որոնք ներկայացվել են մեզ տարբեր մարդկանց կողմից և տարբեր տարիների: Տախտ. 2-ում Արտաշատի բրոնզե քաղաքային դրամների տիպերից մեկի երկու նմուշներ են՝ դարձերեսին ցորենի հասկով: Դրամների իրար կողք դրված լուսանկարներն ուշադիր զննողը կնկատի, որ դրանք իրենց բոլոր մանրամասներով՝ դրամների շրջանակների ուրվագծերի, պատկերների տեղադրության, մաշվածության և տեխնիկական խոտանի (հասկի տակ՝ դրամի եզրի ճաքը), ճիշտ նույն դրամի լուսանկարներ են: Բայց կան տարբերություններ: Ամենաակնհայտը արտաքին մշակվածքի (գունային) տարբերությունն է, բայց ավելի կարևոր է կշիռների և չափերի անհամապատասխանությունը. ձախ կողմինն ավելի թեթև ու փոքր է: Այս դիտարկումներից բխող եզրակացությունն այն է, որ սրանցից մեկը կեղծված է պատճենահանման եղանակով: Կամ երկուսն էլ կեղծված են, նույն եղանակով, մեկ այլ դրամից, որը մեզ անհայտ է: Այս դրամների վերաբերյալ կատարված դիտարկումների իրավացիությունը հաստատվում է ևս երկու այդպիսի դեպքերի բացահայտմամբ, որոնք ներկայացված են տախտ. 3 և 4-ում:[2]

Հնագիտություն / հնասիրություն, հնագողություն, հնավաճառություն

Հին դրամների մեր ժամանակներում արված կեղծումները չարյաց փոքրագույնն են. ստի ոտքերը կարճ են, և կեղծիքը մի օր բացահայտվում է: Դրամագիտությանը, իսկ լայն առումով՝ հնագիտությանն ու պատմագիտությանը հասցվող կորստաբեր վնասի պատճառներն այլ են: Ենթավերնագիրն արտացում է այդ պատճառների հակամետ միասնությունը: Այս տարիների ընթացքում մենք նկատել ենք, որ որոշ դեպքերում, երբ ինչ-որ դրամական խումբ է ներկայացվում մեզ, այն լինում է, պատկերավոր ասած, «սերուցքը քաշած» վիճակում: Այսինքն, մինչև մեզ հասնելը, դրանցից հաճախ հանված են լինում լավ պահպանված կամ հազվագյուտ դրամները: Դա անհիմն ենթադրություն չէ, այդ մասին են վկայում եվրոպական և այլ աճուրդներում վաճառվող բազմաթիվ հայկական դրամները, որոնց մեծամասնությունն անհամեմատ ավելի լավ վիճակում է, քան ՀՊԹ-ի հավաքածուի մեջ եղածները: Դրամական տիպեր կան, որ չեն կարող այլ տեղից գտնված լինել, քան Հայաստանից, նույնիսկ որոշ դեպքերում ավելի ստույգ կարող ենք ասել՝ Արտաշատից: Դետեկտոր կիրառող օտարազգի գանձախույզները նույնպես հազարավոր հայկական հելլենիստական և կիլիկյան հայկական դրամներ են հողից հանում Թուրքիայում և Սիրիայում՝ դրանք առաջարկելով դրամների առևտրով կամ հավաքորդությամբ զբաղվողներին: Չակերտավոր «սև» շուկան ակտիվորեն գործում է, և այն բոլորովին էլ սև չէ, այլ մոխրագույն, քանի որ այնտեղ

2 Առիթն օգտագործելով՝ նկատենք, որ տախտ. 3-ի դրամների դարձերեսին երկու սարերի արանքում երևացող Հ-աձև նշանը և կետը վերևում՝ պարզապես դրամի վրա եղած կոռոզիայի միտումնավոր չմաքրած և «ձև տված» մնացորդ է:

առևտուրը կատարվում է գրեթե անթաքույց և անպատիժ: Այս հանրահայտ իրողությունը լրջորեն չի գիտակցվում ոչ միայն լայն հանրության, այլև մասնագիտական և իրավապահ ոլորտներում աշխատող մարդկանց կողմից: Ինչպե՞ս կարելի է պատկերացնել, օրինակ, որ հնագիտական ուսումնասիրությունները վարվեն ոչ թե հնագիտական պեղումներով ստացված ինֆորմացիայի և հայտնաբերված նյութի հիման վրա, որի մասին հնագետն ունի տեղագրական, շերտագրական, միջավայրի վերաբերյալ համալիր տեղեկություններ ու պատկերացումներ, այլ միայն պատահական գտածոների և գանձախույզների կողմից դամբարանների կամ բնակավայրերի հնագիտական միջավայրի խաթարմամբ հողից հանված առարկաներով: Կիլիկիայի հայկական դրամագիտությունն ամբողջովին, իսկ անտիկ Հայաստանի դրամագիտությունը՝ գրեթե ամբողջովին, խարխափում են հնագիտական կոնտեքստից կտրված: Այսպիսի պայմաններում Կիլիկյան հայ թագավորների դրամների հետազոտության ոլորտն ունի մի փոքր «առավելություն» այն իմաստով, որ նյութը բավական առատ է, որը կարող է թույլ տալ կնիքների համեմատության մեթոդի կիրառմամբ, չափագիտական և մետաղագրական տվյալների ուսումնասիրությամբ հասնել արդյունքների՝ որոշակի սահմաններում: Անտիկ հայկական դրամների հետազոտության հնարավորությունների սահմանները շատ ավելի նեղ են՝ նյութի սղության և դրամների մեծամասնության վատ պահպանված լինելու հետևանքով: Դրամագետները, ցավոք, որպես կանոն ստիպված են աշխատել հնագիտական ինֆորմացիայի գրեթե լիակատար բացակայության պայմաններում: Մեծ չափով նաև հենց այս վիճակից են բխում դրամագիտական ինքնին բարդ խնդիրների լուծման ճանապարհին առաջացող հավելյալ դժվարությունները և հետազոտողների շրջանում գոյություն ունեցող տարաձայնությունները: Մերկախոս չհնչելու համար բերենք ընդամենը մեկ օրինակ: 1985 թ., Արտաշատի երկրորդ, ամենաբարձր բլրի հնագիտական պեղումներից նույն օրը և նույն վայրում հայտնաբերվել էին պղնձե չորս դրամներ՝ մինչ այդ անհայտ տիպերի, որոնցից երկուսի վրա հունարեն գրված էր Արտաշես անունը, իսկ մյուս երկուսի վրա ավելի ուշ նույնպես ընթերցվեց Արտաշես անունը՝ արամերեն գրությամբ: Ցավոք բոլոր չորս դրամները վերգետնյա գտածոներ են, այսինքն՝ հնագիտական որոշակի շերտից չեն, սակայն նույն տեղում և նույն օրը հայտնաբերված լինելու փաստը հուշում է դրանց համաժամանակյա լինելու հավանականության մասին: 21-րդ դ. սկզբներից այդպիսի դրամների քանակը «սև շուկայում» սկսեց աղետալիորեն աճել: Այժմ ՀՊԹ-ն ունի 40 այդպիսի դրամ, մեծ մասամբ վատ պահպանվածության, որոնցից չորսը վերոհիշյալներն են, իսկ 36-ը թանգարան են մուտքագրվել 2001 – 2013 թթ. ընթացքում՝ որպես գնում կամ նվիրատվություն՝ ստացված տարբեր մարդկանցից: Երբ կարգավորվում էր թվային շտեմարանում կուտակված դրամների այս խումբը, պարզվեց, որ մեր ձեռքի տակով անցել է այսպիսի 140 դրամ, որից 26-ը հունարեն, 114-ը արամերեն գրությամբ: Նկատենք, որ այս քանակի մեջ չեն մտնում աճուրդներով և այլ ճանապարհներով վաճառված նմանատիպ շատ դրամներ: Կարող ենք չկասկածել, որ այդ դրամները նույնպես Արտաշատից կամ նրա շրջակայքից են: Փորձեք պատկերացնել, թե ինչպիսին է դրամների միայն այս խմբի պատմահնագիտական իրողությունները բացահայ-

տելու հնարավորություններին հասցված անդառնալի վնասը: Ներկայումս որևէ մեկը չի կարող վստահորեն պնդել, որ սրանք ոչ թե Արտաշես 2-րդի, այլ Արտաշես 1-ինի դրամներն են, կամ՝ հակառակը, քանի որ այդ հարյուրավոր դրամները հողից հանող գանձախույզները և հին դրամներ սիրող պատվիրատուների հանրությունը հօդս են ցնդեցրել նաև հնագիտական միջավայրի մասին անվերականգնելի ինֆորմացիան, որն այնքան անհրաժեշտ է արդի հնագիտության և դրամագիտության համար: Սա, ընդամենը, բազմաթիվ ցավալի օրինակներից մեկն է (տախտ. 5):

Մեր թվային շտեմարանում քիչ չեն շատ վատ վիճակում գտնվող, խիստ մաշված դրամները, որոնք ինքնին այլևս մեծ արժեք չեն ներկայացնում, քանի որ կտրված են հնագիտական կոնտեքստից: Կան նաև չմաքրված դրամների լուսանկարներ, որոնց տված ինֆորմացիան թերի է, իսկ մաքրելու հնարավորություն չունես, որովհետև դրանք այլևս հասանելի չեն ու դրանց որտեղ լինելն այլևս հայտնի չէ: Մինչդեռ նույնիսկ այդպիսի դրամներից յուրաքանչյուրի ինֆորմատիվ արժեքը, գիտությանը տված օգուտը կարող էր շատ մեծ լինել, եթե «հայրենասեր» գանձախույզներն ու նրանց խրախուսողները հնագետներին հնարավորություն տային այն հայտնաբերելու և փաստագրելու (իրավիճակի նկարագրում, շերտագրական տվյալներ, լուսանկարում, չափագրում) իր պատմական միջավայրում (կոնկրետ հնավայր, մշակութային շերտ, կառույց, դամբարան և այլն):[3]

Ruben Vardanyan
PhD
History Museum of Armenia
rubenvardanyan1@gmail.com

Armine Zohrabyan
PhD
History Museum of Armenia
zohrabyanarmine@yahoo.com

Hasmik Hovhannisyan
PhD
History Museum of Armenia
hassmik@yahoo.com

NUMISMATIC DIGITAL NON-MUSEUM REPOSITORY IN THE MUSEUM

Keywords: History Museum of Armenia, collection, coin, numismatic digital database, archaeological context, awareness, responsibility.

Since 2002, specialists of the Numismatic department of the History Museum of Armenia have been compiling a digital database of archaeological material (mostly numismatic) of scientific interest, that visitors bring to the museum for professional advice on identification, authentication or for sale. The purpose of this preliminary report is to provide an

3 Այս խնդրին անդրադարձ եղել է դեռևս 21 տարի առաջ՝ Վարդանյան Ռ., Հնագիտական ժառանգությունը՝ ազգային հարստություն, «Օրենք և իրականություն», Երևան, 2002, N 7, էջ 29 – 31: Ավա՛ղ: Ասողին լսող է պետք:

overview and summarize the results of the work of the museum's numismatists in this direction from 2002 to 2022.

During this time, we have had about 1100 visitors who have presented more than 7200 coins, of which about 5400 have been scanned. The chronological coverage of the material is from the Classical period to Modern times. Most of the coins are found on the territory of the Republic of Armenia, but there are also a significant number of imported coins.

The article also talks about the inadequate level of responsibility towards archaeological values, in this case, ancient coins, at almost all sectors of society, and the resulting irreparable damage to science.

Рубен Варданян
Кандидат исторических наук
Музей истории Армении
rubenvardanyan1@gmail.com

Армине Зограбян
Кандидат исторических наук
Музей истории Армении
zohrabyanarmine@yahoo.com

Асмик Ованнисян
Кандидат исторических наук
Музей истории Армении
hassmik@yahoo.com

НУМИЗМАТИЧЕСКОЕ ЦИФРОВОЕ НЕМУЗЕЙНОЕ ХРАНИЛИЩЕ В МУЗЕЕ

Ключевые слова: Музей истории Армении, коллекция, монета, нумизматическое цифровое хранилище, археологический контекст, осведомленность, ответственность

С 2002 года специалисты нумизматического отдела Музея истории Армении составляют цифровую базу данных археологических материалов (в основном нумизматических), представляющих научный интерес, которые посетители приносят в музей для получения профессиональных консультаций по определению, проверки подлинности или для продажи. Цель данного предварительного отчета – дать обзор и подвести итоги работы нумизматов музея в этом направлении с 2002 по 2022 год.

За это время у нас побывало около 1100 посетителей, которые предъявили более 7200 монет, из которых отсканировано около 5400. Хронологический охват материала – от классического периода до Нового времени. Большая часть монет найдена на территории Республики Армения, но есть и значительное количество привозных монет.

В статье также говорится о недостаточном уровне ответственности по отношению к археологическим ценностям, в данном случае старинным монетам, практически у всех слоев общества, и вытекающем из этого непоправимом ущербе для науки.

Ռոբերտ Վարդանյան, Արմինե Զոհրաբյան, Համլիկ Հովհաննիսյան

ՈՉ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ ԹՎԱՅԻՆ ՇՏԵՄԱՐԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ



Տախտ. 1. Ոչ թանգարանային դրամագիտական թվային տվյալների շտեմարանի ձևավորման դինամիկան

Տախտ. 2



Տախտ. 3.

Տախտ. 4.

Տախտ. 5.

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ